

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱԿԻՃԱԿԻ ԵՎ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ
ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿ**

ԱՐԱ ՊԱՊՅԱՆ

Սան Ռեմոյի համաժողովի (18-26 ապրիլի 1920 թ.) հիմնական խնդիրը Լոնդոնի առաջին համաժողովի (12 փետրվարի - 10 ապրիլի 1920 թ.) աշխատանքների ամփոփումն ու դրանք ավարտին հասցնելն էր, այդ թվում՝ Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի վերջնական պատրաստումը¹: Սա այն պայմանագիրն էր, որը հետագայում, ըստ կնքման վայրի, առավելապես հայտնի է Սևրի պայմանագրի (10 օգոստոսի 1920 թ.) անվանումով: Սան Ռեմոյի համաժողովի հիմնական քաղաքական դերակատարներն են եղել Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի և Իտալիայի վարչապետերը, համապատասխանաբար՝ Ղեյվիդ Լլոյդ Ջորջը (David Lloyd George), Ալեքսանդր Միլերանը (Alexandre Millerand), Ֆրանչեսկո Նիտտին (Francesco Nitti) և Փարիզում Ճապոնիայի դեսպան Կեյշիրո Մացոին (Keishiro Matsui): Ի տարբերություն նախորդ Լոնդոնի համաժողովի՝ ԱՄՆ պաշտոնական ներկայացուցիչը՝ Հռոմուն Միացյալ Նահանգների դեսպան Ռոբերտ Անդրվուդ Ջոնսոնը (Robert Underwood Johnson), որոշակի մասնակցություն է ունեցել նշյալ համաժողովին: Նա որպես դիտորդ ներկա է եղել հանդիպումներից հինգին՝ 24-26 ապրիլի 1920 թ.:

Սան Ռեմոյի համաժողովի առաջին օրը՝ 18-ը ապրիլի 1920 թ., հաստատվել է համաժողովի աշխատակարգը: Որոշվել է քննարկվելիք հարցերի հետևյալ հերթականությունը՝ Թուրքիային, Գերմանիային, Ռուսաստանին և Ադրիատիկին աղերսվող հարցեր²: Ըստ այդմ, Հայաստանի սահմաններին առնչվող հարցերը՝ որպես Թուրքիայի ապագայի հետ շաղկապված խնդիրներ, Սան Ռեմոյի համաժողովում առաջին անգամ քննարկվել են 1920 թ. ապրիլի 19-ի նիստի ժամանակ, երբ քննարկվել է Միացյալ Նահանգների պետքարտուղար Բեյնբրիջ Քոլբիի (Bainbridge Colby) 24 մարտի 1920 թ. թվակիր գրության³ պատասխան-

¹ Տե՛ս «Documents on British Foreign Policy 1919-1939» (ed. by R. Butler, J. Bury), First Series, v. VIII, London, 1958, էջ III [հետայսու՝ DBFP]:

² Տե՛ս DBFP, v. VIII: Document № 1.5: Order of business, էջ 3:

³ Գրության ամբողջական տեքստը տպագրվել է հետևյալ գրքերում. «Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson: Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary between Turkey and Armenia», Washington, November 22, 1920, Appendix I, № 4 (prepared by Ara Papian). Yerevan, 2011, Document: Bainbridge Colby to J.J.Jusserand, March 24, 1920, էջ 118-124. [հետայսու՝ **W. Wilson**, Arbitral Award], Papers Relating to the Foreign Relations of the United States, 1920, v. III, Washington, 1936, «Document: The Secretary of State to the French Ambassador», Washington, March 24, 1920, էջ 750-753 [հետայսու՝ FRUS]:

նը⁴: Թեև նշյալ գրությունը Վաշինգտոնում Բրիտանիայի դեսպանատնից վերջինիս արտգործնախարարություն էր հեռագրվել դեռևս մարտի 26-ին⁵, այսուհանդերձ այն պաշտոնական քննարկման չէր դրվել, հետևաբար չէր պատրաստվել նաև դրա վերջնական պատասխանը: Պետքարտուղար Քուլբիի հիշյալ գրությունը վերաբերում էր Օսմանյան կայսրությանն առնչվող բազում հարցերի, այդ թվում նաև՝ Հայաստանի կարգավիճակին և սահմաններին: Համաժողովն իր պատասխան գրության մեջ կետ առ կետ անդրադարձել է այդ հարցերին և տվել դրանց վերաբերյալ իր դիրքորոշումը:

Հայաստանին վերաբերող դիրքորոշումը ամփոփված է գրության յոթերորդ կետում: Այդտեղ նշվում է, որ համաժողովը լիովին կիսում է ԱՄՆ շահագրգռությունը՝ Հայաստանին հատկացնել բավարար տարածք: Միևնույն ժամանակ առանձնանշվում է, որ Հայաստանին հատկացվելիք տարածքների մի մասը դեռևս գտնվում է թուրքական ռազմակալության ներքո, իսկ Տրապիզոն-Երզնկա տարածաշրջանի ընդգրկումը Հայաստանի սահմաններում համարում է խնդրահարույց հենց Հայաստանի շահերի տեսանկյունից, քանի որ այդ շրջանն այլևս չունի հայ բնակչություն: Գիտակցելով ծովային ելքի կարևորությունը Հայաստանի համար՝ որպես այլընտրանք առաջարկվում է հետևյալ լուծումը. Հայաստանին տրամադրել անարգել ելք Բաթում ազատ նավահանգստով, Հայաստանի կազմում ներառել Սարմենեհ (Sarmeneh) և Օֆ (Of) նավահանգիստները, Հայաստանին շնորհել Տրապիզոն նավահանգստից ազատ օգտվելու իրավունք: Վերջինս Երզնկայի հետ միասին ենթակա էր լիակատար ապառազմականացման: Համաժողովն իր գրության մեջ նաև իրազեկում է, որ դիմել է Ազգերի լիգային, և ստացած հուսադրող պատասխանը հինք է տալիս ենթադրելու, որ փոխգործակցությունը հնարավորություն կտա հաղթահարելու վերոհիշյալ ծրագրերի իրականացման ճանապարհին առկա բոլոր խոչընդոտները⁶:

Նույն օրը՝ ապրիլի 19-ին, քննարկվել է մի հարց ևս, որը վերաբերում էր նաև Հայաստանի սահմանին: Ղա Քոդստանի հարցն էր: Գերագույն խորհուրդը որոշում է ստեղծել հանձնախումբ՝ Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի և Իտալիայի մեկական ներկայացուցչի մասնակցությամբ, որը Թուրքիայի հետ խաղաղության պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում, կնախապատրաստի Քոդական ինքնավարության կառուցվածքը: Այդ միավորի սահմանների համար տրվում են խիստ անորոշ բնութագրիչներ՝ Եփրատից արևելք, Հայաստանից հարավ, Սիրիայից և Միջագետքից հյուսիս: Այսպիսով, առաջին անգամ Քոդական ինքնավարության, իսկ ըստ նախատեսածի՝ հետագայում նաև

⁴ Տե՛ս DBFP, v. VIII, Document № 4.1: Preparation of peace with Turkey: discussion of President Wilson's note of March 24, 1920, էջ 20:

⁵ Տե՛ս DBFP, v. VII, Document № 75.3: Consideration of President Wilson's note on Turkey, n. 1, March 30, 1920, էջ 679:

⁶ Տե՛ս DBFP, v. VIII, Document № 4, Appendix 2: Draft answer to American note, April 19, 1920, էջ 33:

պետության, հյուսիսային սահմանն ուղղակիորեն կախման մեջ է դրվում Հայաստանի հարավային սահմանի որոշումից⁷:

Հաջորդ օրը՝ 1920 թ. ապրիլի 20-ին, Սան Ռեմոյի համաժողովը քննության առարկա է դարձնում Ազգերի լիգայի խորհրդի⁸ 11.04.1920 թ. հուշագիրը, որը պատասխան էր Գերագույն խորհրդի 12.03.1920 թ. գրության: Այս գրությամբ Գերագույն խորհուրդը Ազգերի լիգայի խորհրդից խնդրել էր, որ Ազգերի լիգան ստանձնի Հայաստանի հովանավորությունը⁹: Նշյալ հարցը Ազգերի լիգայի խորհրդի ուշադրությանն է ներկայացնում Բրիտանական կայսրության ներկայացուցիչ Հերբերտ Ալբերտ Ֆիշերը (Herbert Albert Fisher) իր «Հայաստանի ապագա կարգավիճակը» (*The Future Status of Armenia*) զեկույցի մեջ, որտեղ մասնավորապես ասված է.

«Ազգերի լիգայի խորհուրդն այն կարծիքին է, որ ազատ, ապահով և անկախ հիմքի վրա Հայաստանի պետականության ստեղծումն այն խնդրո առարկան է, որ կստանա, և որն արժանի է ստանալու որջ քաղաքակիրթ աշխարհի լուսավորյալ մտքի համակրանքն ու աջակցությունը: Հնամենի հայ ազգի վերջերս ապրած աղետները լայնորեն հայտնի են: Դրանք իրենց ընդգրկումով և դաժանությամբ գերազանցեցին այս մոլորակի վրա մարդկության պատմության մեջ բոլոր հիշատակվածները, և եթե հնարավոր չլինի միջոցներ ի հայտ բերել պաշտպանելու համար այս դժբախտ ժողովրդին վերջերս ապրած արհավիրքների կրկնությունից, ուրեմն դա հայտանիշը կլինի այն բանի, որ քաղաքակրթության պաշարները տեղատվության մեջ են»¹⁰:

Բրիտանացի դիվանագետը նշում է նաև, որ վերոհիշյալ արհավիրքներին վերջ տալու լավագույն ձևը «Ազգերի լիգայի հովանու ներքո Հայաստանի մանդատի ընդունումն է որևէ քաղաքակիրթ երկրի կողմից»¹¹: Ըստ այդմ՝ Ազգերի լիգայի խորհուրդը, քննության ենթարկելով Հայաստանի հարցը և շեշտելով, որ «Հայկական պետության հաստատումը՝ ապահովության և անկախության հիմքերի վրա, մարդկության պարտավորությունն է»¹², միևնույն ժամանակ իր հուշագրում նշում է, որ Ազգերի լիգան ուղղակիորեն չի կարող ստանձնել Հայաստանի մանդատը, քանզի Ազգերի լիգայի կանոնադրության

⁷ Տե՛ս DBFP, v. VIII, Document № 5, Appendix 5: Revised Draft Articles as to Kurdistan, April 19, 1920, էջ 44-45:

⁸ Ազգերի լիգայի չորրորդ նստաշրջանը գումարվել է Փարիզում 1920 թ. ապրիլի 9-11-ը: Ներկա են եղել հետևյալ երկրների՝ Ֆրանսիա, Բելգիա, Բրազիլիա, Բրիտանական կայսրություն, Հունաստան, Իտալիա, Ճապոնիա և Իսպանիա, ներկայացուցիչները (տե՛ս «Proces-Verbal of the Fourth Session of the Council of the League of Nations», «League of Nations Official Journal», № 3, April-May 1920, էջ 80-81):

⁹ Տե՛ս DBFP, v. VII, Document № 58.2 & n. 4: Decision to invite the Council League on Nations to be responsible for the future protection of Armenia, March 12, 1920, էջ 477-479:

¹⁰ **H. A. Fisher**, *The Future Status of Armenia*, April 11, 1920, *League of Nations Official Journal*, № 3, April-May 1920, էջ 81:

¹¹ Սույն տեղում:

¹² *Future Status of Armenia*, Memorandum agreed to by the Council of the League of Nations, meeting in Paris, on 11th April, 1920. *League of Nations Official Journal*, № 3, April-May 1920, p. 85 [հետայսու՝ Memorandum]: Տե՛ս նաև՝ *The National Archives*, UK, Catalogue Reference: CAB/24/104, Document: *Future Status of Armenia*, Memorandum agreed by the Council of the League of the Nations, Paris, April 11th, 1920.

(Covenant League of Nations) 22-րդ հոդվածն ունի հստակ կանոնակարգված սահմանափակում այդ հարցում: Մասնավորապես. «Նա [Ազգերի լիգայի խորհուրդը] չի կարող անտեսել այն փաստը, որ 22-րդ հոդվածի մեջ առկա պայմանները Ազգերի լիգային չեն ընծեռում ինքնուրույնաբար մանդատ ստանձնելու և իրականացնելու հնարավորություն»¹³: Ըստ նշյալ հոդվածի երկրորդ կետի՝ խնամակալությունը (tutelage) պիտի հանձնվի «առաջադեմ երկրների» (advanced nations), որոնք էլ պիտի իրականացնեն այս հանձնառությունը «որպես խնամատարներ Ազգերի լիգայի անունից»¹⁴ (as Mandatories on behalf of the League):

Վերոհիշյալ հուշագրի մեջ Ազգերի լիգայի խորհուրդն առանձնանշում է մի քանի կետ և փորձում տալ կամ ստանալ պարզաբանումներ:

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը զգալի դրամական միջոցների կարիք պիտի ունենա երկրի կենսագործունեությունն ապահովելու համար: Քանի որ չկա մի երկիր, որն առանձին ի վիճակի և պատրաստակամ է դա անելու, խորհուրդն իր մտադրությունն է հայտնում դիմելու Ազգերի լիգայի համաժողովին (Assembly), որպեսզի նման միասնական վարկ ապահովվի Ազգերի լիգայի անդամ բոլոր երկրներից:
2. Քանի որ Հայաստանի Հանրապետության տարածքի մի զգալի մասը գտնվում է թուրքական բանակի ռազմակալման ներքո, և Ազգերի լիգան չունի զինված ուժեր, Ազգերի լիգայի խորհուրդն ուզում է իմանալ արդյո՞ք Ղազնակից երկրները պատրաստ են հարկ եղած դեպքում ուժի միջոցով ապահովելու այդ տարածքների վերահաստատումը Հայաստանին:
3. Հաշվի առնելով, որ Հայաստանի՝ դեպի ծով ազատ ելք ունենալու հարցը կարևոր է ոչ միայն Հայաստանի, այլև հնարավոր հովանավոր երկրի համար՝ փոխադարձ անխափան հարաբերությունների տեսանկյունից, Ազգերի լիգայի խորհուրդն ուզում է իմանալ՝ ի՞նչ լուծումներ են նախանշված դրա համար խաղաղության պայմանագրի մեջ: Մասնավորապես՝ Բաթումի հարցով:
4. Ընդունելով, որ Հայկական հարցի լավագույն լուծումը կլինի քաղաքակիրթ որևէ տերության կողմից Հայաստանի մանդատի ստանձնումը, այսուհանդերձ Ազգերի լիգայի խորհուրդը չի բացառում, որ նման երկիր չգտնվի: Ազգերի լիգայի խորհուրդն իր պատրաստակամությունն է հայտնում այդ դեպքում շարունակել քննարկումները Չերագույն խորհրդի հետ՝ Հայաստանի հովանավորության այլ լուծումներ միասնաբար գտնելու համար¹⁵:

Ազգերի լիգայի հուշագրի շուրջ ծավալվել է մտքերի բախում: Ֆրանսիայի ներկայացուցիչ Միլերանը և Իտալիայի ներկայացուցիչ Նիտտին նշել են, որ ներկա իրավիճակում իրենց երկրներն ի վիճակի չեն Հայաստանին ցուցաբերելու դրամական կամ ռազմական օգնություն: Լորդ Քերզոնը ներ-

¹³ «Memorandum», *op. cit.* 86.

¹⁴ Article 22, The Covenant of the League of Nations, League of Nations Official Journal, № 1, February, 1920, p. 9, տես նաև՝ Article 22, Treaty of Versailles, The Treaties of Peace, 1919-1923 (ed. by Lawrence Martin), New York, 1924, p. 19.

¹⁵ Տես «Memorandum», *op. cit.*, էջ 86-87:

կաներին հիշեցրել է, որ Հայաստանի ազատագրման գաղափարը ամենահաճախ հնչած մտքերից է եղել, այն հռչակվել է և՛ Ֆրանսիայի, և՛ Մեծ Բրիտանիայի, և՛ նախագահ Վիլսոնի կողմից: Հետևաբար «նրանք չեն կարող իրենց ձեռքերը լվանալ այս խնդրից»¹⁶: Միևնույն ժամանակ, բրիտանական արտգործնախարարը շեշտել է, որ ռազմական օգնություն չի նշանակում միայն զորքերի առաքում. տվյալ դեպքում առավելաբար պահանջվում են սպաներ և զինամթերք: Քննարկման վերջում ընդունվել է որոշում՝ հարցը փոխանցել ռազմական խորհրդականներին ավելի հանգամանալից և մասնագիտական հաշվարկ ստանալու համար¹⁷:

Հայաստանի սահմանների հարցը հաջորդ անգամ քննության առարկա է դարձել 1920 թ. ապրիլի 22-ին, երբ վերստին արժարծվել է Թուրքիայի սահմանների հարցը երկու տեսանկյունից՝ հույն-թուրքական և հայ-թուրքական: Անհամեմատ բարդ է համարվել երկրորդը, քանի որ Հայաստանը «մի կողմում ունի ադրբեջանցիներին, որոնք կիսաքաղաքակիրթ են (*half civilized*), մյուս կողմում ունի անատոլիացիներին, իսկ մյուս կողմում՝ քրդերին»¹⁸: Հատկապես բարդագույն հարց է համարվել Էրզրումի խնդիրը, որով էլ մեծապես պայմանավորված էր հայ-թուրքական սահմանը: Քննության մասնակիցները գտել են, որ թեև պատերազմից առաջ էլ հայերը քաղաքում մեծամասնություն չեն կազմել, այսուհանդերձ այն պիտի տրվի Հայաստանին: Բերվել է մի քանի հիմնավորում: Ֆրանսիայի ներկայացուցիչ Բերթելոն իր ելույթում նշել է. «Հաշվի առնելով, որ քաղաքում եղել է զգալի հայկական համայնք, և որը ոչնչացվել է՝ այն ամբողջովին տիրելու համար, ուստի բարոյական տեսանկյունից ճիշտ է քաղաքը Հայաստանին հանձնելը»: Նա ընդգծել է քաղաքի ռազմական նշանակությունը՝ նշելով, որ եթե Էրզրում քաղաքն իր հզոր ամրություններով մնա թուրքերի ձեռքում, ապա դա ոչ միայն լուրջ վտանգ կլինի Հայաստանի համար, այլև թուրքերին հնարավորություն կտա Հայաստանը կտրել ծովից: «Ի՞նչ պիտի անի նա [Հայաստանն] առանց ծովի»¹⁹, հարց է հնչեցրել Ֆրանսիայի ներկայացուցիչը: Բրիտանական կայսրությունից Լորդ Քերզոնը, պաշտպանելով ֆրանսիացի իր գործընկերոջ տեսակետը, հիշեցրել է Լոնդոնի համաժողովի Հայաստանի սահմանները որոշող հատուկ հանձնախմբի տեսակետը, այն է՝ Էրզրումը պիտի տրվի Հայաստանին²⁰: Նա նաև նշել է, որ համաժողովն ընդունել է այդ առաջարկը՝ լիովին գիտակցելով բոլոր դժվարությունները, այդ թվում նաև՝ ժողովրդագրական: Ըստ Քերզոնի՝ թեև Էրզրումի շրջանում հայերը պատերազմից առաջ եղել են 160 հազար, իսկ թուրքերը (մուսուլմանները)՝ 360 հազար, սակայն պետք է հաշվի առնել, որ «հայ բնակչությունը մեծապես կրճատվել է

¹⁶ DBFP, v. VIII, Document № 6.2: Discussion of the memo of April 11 from the Council of the League of Nations concerning Armenia, April 20, 1920, p. 49.

¹⁷ *Ibid.*, p. 50.

¹⁸ DBFP, v. VIII, Document № 11.2: Frontiers of Turkey, question of ceding Erzerum to Armenia, April 22, 1920, p. 108.

¹⁹ *Ibid.*, p. 109.

²⁰ Լոնդոնի համաժողովի նշյալ հանձնախմբի ամփոփումն ու ամփոփիչ փաստաթղթերը տես DBFP, v. VII, Document № 34.2, Decisions concerning Armenia, Feb. 27, 1920, էջ 280-285, Document № 71, Appendix 1, Report of a Future Armenian State, էջ 642-648, նաև՝ **W. Wilson**, Arbitral Award, Appendix I, Number 2, Document: Report and Proposals of the Commission for the Delimitation of the Boundaries of Armenia, Feb. 24, 1920, էջ 98-112:

երկարատև տարիների ընթացքում իրականացված մի շարք ջարդերի հետևանքով»²¹ (*The Armenian population, however, had been greatly reduced by a series of massacres extending over a great many years*):

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ հնչեցված թվերը մեծապես խարսխված էին թուրքական պաշտոնական տվյալների վրա, որոնք խիստ աչառու էին: Նույն համաժողովում հայկական պատվիրակությունը ներկայացնում է այլ տվյալներ: Ըստ Ավետիս Ահարոնյանի 1920 թ. ապրիլի 21-ին ներկայացրած թվերի՝ Էրզրումի վիլայեթում Առաջին աշխարհամարտից առաջ ապրել է 240 հազար թուրք և 227 հազար հայ: Ընդ որում, թուրքերի թվի մեջ հաշվառված են եղել նաև թուրքական Չորրորդ բանակը՝ 40 հազար մարդ, և դրսեկ պաշտոնյաներ՝ 10 հազար մարդ²²: Ընդհանրապես, թուրքական վիճակագրությունը երբևէ չի տարբերակել մուսուլմաններին ըստ ազգային պատկանելության, հետևաբար գրեթե միշտ բոլոր մուսուլմանները ներկայացվել են որպես թուրքեր: Ժամանակակից գիտնականները Էրզրումի վիլայեթի հայերի թիվը 1914 թ. հաշվում են 215 հազար²³:

Քանի որ համաժողովը Էրզրումի խնդրում միասնական որոշման չի կարողացել հանգել, ուստի նպատակահարմար է գտել լսել նաև հայկական ներկայացուցիչներին: Ըստ այդմ, 1920 թ. ապրիլի 22-ի հետկեսօրյա նիստին մասնակցելու համար հրավիրվել է Պողոս Նուբար փաշան: Նրան տրված հարցերը եղել են հետևյալ բնույթի. արդյո՞ք Հայաստանն ուզում է, որ Էրզրումն ընդգրկվի Հայաստանի կազմում, պատրա՞ստ է Հայաստանն այն ինքնուրույնաբար ազատագրել և պահել, ինչպես նաև՝ պաշտպանել Հայաստանի սահմանները: Պողոս Նուբարի պատասխանները նշյալ հարցերին եղել են դրական՝ պայմանով, որ Հայաստանը աջակցություն ստանա ռազմամթերքով և զինսարքավորումներով: Ըստ նրա՝ այդ դեպքում Հայաստանն արդեն ի վիճակի կլիներ իր ունեցած 15-հազարանոց բանակին ավելացնել ևս 40 հազարը²⁴:

Հաջորդ օրը՝ ապրիլի 23-ին, Էրզրումի հարցով հանդիպման է հրավիրվել Ավետիս Ահարոնյանը: Թեև նրա պատասխաններն ավելի զգուշավոր են եղել, այդուհանդերձ նա ևս գտել է, որ համապատասխան աջակցության դեպքում հայերը «*առաջիկա երկու-երեք ամսվա ընթացքում*»²⁵ կարող են ունենալ ոչ պակաս, քան 40-հազարանոց բանակ: Նա նաև ընդգծել է. «*Ով իշխի Էրզրումի վրա, նա իր տիրապետությունը կտարածի ոչ միայն ողջ նահանգի, այլև փաստացի ողջ Հայաստանի վրա*»²⁶:

Շատ հետաքրքրական է, որ լուռ պայքար է ծավալվել Էրզրումի ձակատագրի շուրջ: Ահարոնյանն իր հուշերում վկայում է, որ ելույթից առաջ

²¹ DBFP, v. VIII, Document № 11.2, *op. cit.*, p. 110.

²² Տե՛ս **Av. Aharonian**, From Sardarapat to Sevres and Lausanne, Part V, The Armenian Review, Dec., 1963, էջ 45:

²³ Տե՛ս **Robert H. Hewsen**, Armenia, A Historical Atlas, Chicago, 2001, էջ 238:

²⁴ Տե՛ս DBFP, v. VIII, Document № 11.2: *op. cit.*, Opinion of Boghos Nubar Pasha concerning Armenian frontiers, էջ 117:

²⁵ DBFP, v. VIII, Document № 12.1: Opinion of M. Aharonian concerning Armenian frontiers, April 23, 1920, p. 120.

²⁶ *Ibid.*, 121.

իրեն է մոտեցել Բերթելուն և ասել, որ ինքն ու Քերզոնը կողմ են երգրումը Հայաստանին տալուն, իսկ Լլոյդ Ջորջն ու Նիտտին դեմ են: Նույն ժամանակ Հունաստանի վարչապետ Վենիզելոսը Ահարոնյանին խորհուրդ է տվել «*դաշնակիցներից իզուր օգնություն չխնդրել, քանի որ դա բավական կլինի գրկվելու Երզրումից*», այլ, անկախ ամեն ինչից, պնդել, որ հայերը կարող են գրավել Երզրումը սեփական ուժերով: Ըստ նրա, հայերը «*նախ պետք է ստանան դա անելու իրավունքը, իսկ փաստացի գրավումը կարող է հետաձգվել*»²⁷:

Պողոս Նուբար փաշային և Ահարոնյանին լսելուց հետո համաժողովը կարծիք է հարցրել ռազմական հարցերով գլխավոր խորհրդական մարշալ Ֆոշից: Վերջինս Երզրումի գրավումը համարել է հայերի համար ծանրագույն խնդիր, քանի որ այնտեղ առկա է ծանր հրետանի, լավ մարզված և ամեն անհրաժեշտով հագեցված կայազոր²⁸:

Երզրումի, այն է՝ Հայաստանի արևմտյան սահմանի հարցի քննարկումը շարունակվել է ապրիլի 23-ի երկրորդ նիստի ժամանակ: Բերթելուն կտրուկ հայտարարել է, որ «*ոչ մի Հայաստան չի կարող գոյություն ունենալ առանց Երզրումի: Երզրումն այդ երկրի կենտրոնն է, նրա բոլոր ճանապարհների հանգույցը*»²⁹: Ծավալված քննարկումները դարձյալ չեն բերել միասնական դիրքորոշման: Հենց այդ ժամանակ էլ առաջին անգամ Լլոյդ Ջորջը հնչեցրել է հայ-թուրքական սահմանի հարցով ԱՄՆ նախագահ Վիլսոնին դիմելու գաղափարը: Նա նաև առաջարկել է Վիլսոնին տեղեկացնել, որ Հայաստանի սահմանների հարցը կախված կլինի Միացյալ Նահանգների՝ այդ հարցում ստանձնելիք պատասխանատվությունից³⁰:

Հաջորդ օրը՝ ապրիլի 24-ին, հարցի քննարկումը շարունակվել է, և Միացյալ Նահանգներին դիմելու հարցն ավելի հստակ ձևակերպում է ստացել: Ֆրանսիայի վարչապետ Ալեքսանդր Միլերանն առաջարկել է հարցը բաժանել երկու մասի և երկու խնդրով դիմել ամերիկացիներին.

1. Նախագահ Վիլսոնին առաջարկել, որ Միացյալ Նահանգները ստանձնի Հայաստանի մանդատը: Եթե այո, ապա հարցը կարելի է լուծված համարել:
2. Եթե ոչ, ապա խնդրել, որ հանդես գա իրավարարությամբ և ասի՝ արդյո՞ք Երզրումը պիտի չեզոք կարգավիճակ ստանա, թե՞ պիտի Հայաստանի մաս կազմի:

Լլոյդ Ջորջը լիովին պաշտպանել է Միլերանի առաջարկը³¹:

Նույն օրվա երկրորդ նիստում շարունակվել են քննարկումները Հայաստանի կարգավիճակի և հայ-թուրքական սահմանի մասին: Իտալիայի վար-

²⁷ Av. Aharonian, *op. cit.*, pp. 43-44.

²⁸ Տե՛ս DBFP, v. VIII, Document № 12.1, *op. cit.*, էջ 122:

²⁹ DBFP, v. VIII, Document № 13.3: Future discussion on Armenian frontiers, April 23, 1920, p. 138.

³⁰ *Ibid.*, p. 140.

³¹ Տե՛ս DBFP, v. VIII, Document № 14.3: Agreement to appeal to the United States of America to assume the Armenian Mandate or to define Armenian boundaries, April 24, 1920, էջ 145:

չապետ Նիտտին նույնպես միացել է Վիլսոնին դիմելու առաջարկին: Ունենալով երեք Մեծ տերությունների վարչապետերի հավանությունը՝ Լյուդ Ջորջը արել է մի կարևոր հայտարարություն, որով հաստատել է, որ Վիլսոնի իրավարար վճիռը բոլորի համար պիտի ունենա կատարման պարտադիր բնույթ. «*Ինչպիսին էլ լինի Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը, այսինքն՝ կորոշի [խնդրո առարկա] տարածքն ամբողջությամբ կամ մասամբ Հայաստանին կամ Թուրքիային տալ, կամ կունենա Հայաստանը ելք դեպի ծով, թե ոչ, այն [որոշումը] պիտի ընդունվի ինչպես Ղազնակից տերությունների, այնպես էլ Թուրքիայի կողմից*»³²: Իր գործընկերների կողմից չստանալով որևէ առարկություն՝ Բրիտանական կայսրության վարչապետը պատրաստակամություն է հայտնել ձևակերպել առաջարկը Վիլսոնին³³:

Դրանից հետո նիստը վարող Նիտտին ժողովասենյակ է հրավիրել Հռոմում ԱՄՆ դեսպան Ռոբերտ Ջոնսոնին (Robert Johnson), ով եկել էր դիտորդի կարգավիճակով ներկա գտնվելու օրվա քննարկումներին: Նիտտին, լավատեղյակ լինելով, որ ամերիկացիներին այդ քննարկումներից ամենից շատ հետաքրքրում է Հայաստանի ճակատագիրը, Ջոնսոնին իրազեկել է, որ Գերագույն խորհուրդը Հայաստանի վերաբերյալ եկել է վերջնական որոշման, և հարցը պիտի հղվի նախագահ Վիլսոնին՝ որպես իրավարարի³⁴: Նույն օրը՝ երեկոյան, դեսպան Ջոնսոնը այդ մասին հեռագրել է պետքարտուղար Քոլբին³⁵:

Հաջորդ օրը՝ ապրիլի 25-ին, համաժողովի նախագահ Նիտտին քննարկման է դրել բրիտանական պատվիրակության կողմից պատրաստված և ԱՄՆ նախագահ Վիլսոնին հղվելիք Հայաստանի կարգավիճակի ու սահմանների մասին գրության անգլերեն և ֆրանսերեն տարբերակները.

1. «*Դիմել նախագահ Վիլսոնին առ այն, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները ստանձնի Հայաստանի մանդատն այն սահմաններում, որը ձևակերպված է Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի նախօրինակի առաջին տպագրության երրորդ մասի հինգերորդ բաժնում*»³⁶:
2. *Եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները պատրաստակամ չլինի ստանձնելու մանդատը, ապա պետք է խնդրել Միացյալ Նահանգների նախագահին, որ իրավարարությամբ որոշի Հայաստանի սահմանները, ինչպես ձևակերպված է ներքո նախօրինակ հողվածի մեջ:*

³² DBFP, v. VIII, Document № 15.1: Appeal to United States of America to assume Armenian mandate or to define Armenian boundaries, April 24, 1920, p. 157.

³³ *Ibid.*, p. 158.

³⁴ Տե՛ս DBFP, v. VIII, Document № 15.2: Arrival at conference of American observer, April 24, 1920, էջ 161:

³⁵ Տե՛ս **W. Wilson**, Arbitral Award, Appendix 1, Number 6, Document: Johnson to Colby, San Remo, 24 April, 1920, էջ 126:

³⁶ Հիշյալ սահմանի նկարագրությունը տե՛ս DBFP, v. VII, Document № 71, Appendix I: Report on Formation of a Future Armenian State, March 24, 1920, էջ 642-649:

3. Հայաստանի մասին հողվածը պետք է ներառվի Խաղաղության պայմանագրի մեջ հետևյալ բովանդակությամբ.

Թուրքիան և Հայաստանը, ինչպես նաև մյուս պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Միացյալ Նահանգների նախագահի իրավարարությանը հղել Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի հարցը՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներում, և ընդունել նրա որոշումն անմիջապես, ինչպես նաև բոլոր այն պայմանները, որոնք նա տեղին կնկատի Հայաստանի անկախ պետությանը դեպի ծով ելք տալու համար:

Մինչև իրավարար վճիռը Թուրքիայի և Հայաստանի սահմանները պիտի մնան ինչպես ներկայումս է:

Հայաստանի սահմանները հյուսիսում և արևելքում, այն է՝ Հայաստանի և Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև, պիտի որոշվեն Գերագույն խորհրդի կողմից Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը որոշելու հետ միաժամանակ, եթե սույն հարցի շուրջ ծախողվի ինքնակամ համաձայնությունը կովկասյան երեք պետությունների միջև:

4. Որ պայմանագրի տեքստը պատրաստող հանձնախումբը, անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով համաժողովի այլ հանձնաժողովների հետ, համապատասխան փոփոխությունների կենթարկի պայմանագրի երրորդ մասի հինգերորդ բաժինը, ինչպես նաև պայմանագրում կանի դրանցից բխող մյուս բոլոր վերափոխումները»³⁷:

Դրանից հետո, քանի որ գրությունը պատրաստվել էր բրիտանական պատվիրակության կողմից, Լլոյդ Ջորջը հարցրել ու ստացել է ֆրանսիական և իտալական պատվիրակությունների համաձայնություններն ընթերցված գրության վերաբերյալ³⁸:

Այսպիսով, Սան Ռեմոյի համաժողովը, ընդունելով որոշում՝ Հայաստանի կարգավիճակի և հայ-թուրքական սահմանի հարցերով դիմել ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին, արմատական փոփոխության է ենթարկել հարցի լուծման սկզբունքը: Ըստ որդեգրած նոր մոտեցման՝ վերոհիշյալ հարցերը փոխանցվում էին չեզոք երկրի հայեցողությանը և իրավարարությանը, իսկ շահագրգիռ երկրներին վերապահվում էր միայն կայացված որոշումներն ընդունելու պարտավորությունը:

Համաժողովի վերջին օրը՝ 1920 թ. ապրիլի 26-ին, Հայաստանին առնչվող հարցերի քննարկման տեսանկյունից ամենաբազմազբաղն էր: Այդ օրը Սան Ռեմոյի համաժողովի քննարկմանն է դրվել Հայաստանին վերաբերող չորս փաստաթուղթ:

Դրանք էին.

1. Նախագահ Վիլսոնի հեռագրի պատասխանի նախօրինակը,
2. Հայաստանին վերաբերող գրության նախօրինակը Վիլսոնին,

³⁷ DBFP, v. VIII, Document № 16.2: Frontiers of Armenia, April 25, 1920, pp. 177-178.

³⁸ *Ibid.*, pp. 178-79.

3. Հայաստանին վերաբերող գրության նախօրինակը Ազգերի լիգային,
4. Այն հոդվածների նախօրինակները, որոնք պիտի ներառվեին Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի հիմնգրող բաժնում³⁹:

Քննարկվող առաջին փաստաթուղթը վերաբերում էր ԱՄՆ պետքարտուղար Քուլբիի ստորագրությամբ ստացված 24 մարտի 1920 թ. գրությանը⁴⁰: Թեև վերջինիս պատասխանը քննարկվել էր դեռևս ապրիլի 19-ի նիստի ժամանակ, և նախապատրաստվել էր պատասխանի նախօրինակը⁴¹, այսուհանդերձ այն վերջնականապես չէր համաձայնեցվել և չէր առաքվել: Ապրիլի 26-ի քննարկումների ժամանակ առկա տեքստը զգալապես մնացել է անփոփոխ, սակայն տեղ են գտնել նաև էական փոփոխություններ: Գրեթե ամբողջությամբ վերաշարադրվել է Հայաստանին վերաբերող №7 կետը: Այն կրճատվել է՝ ավելի քան չորս անգամ: Անփոփոխ են մնացել միայն առաջին երկու նախադասությունները: Համաձայն նախորդ օրը կայացված սկզբունքային որոշման՝ պատասխանի նոր տարբերակից հանվել են Հայաստանի տարածքի և սահմանների մասին բոլոր հիշատակումները: Փոխարենը նշվել է, որ Հայաստանին վերաբերող հարցերը քննության են ենթարկված ԱՄՆ-ին հասցեագրված առանձին գրություններում: Ամերիկյան աղբյուրներում պահպանվել է ԱՄՆ նախագահին ուղարկված պատասխանի առնվազն երկու տարբերակ, որտեղ Հայաստանին վերաբերող հատվածները բովանդակային առումով շատ մոտ են, սակայն էապես տարբերվում են շարադրանքի մեջ: Առաջին տարբերակը պահվում է Բրիտանական ազգային արխիվում⁴², ներառված է ԱՄՆ պետքարտուղարության կողմից հրատարակված պաշտոնական փաստաթղթերի բազմահատորյակում⁴³, իսկ երկրորդը՝ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի փաթեթի մեջ՝ որպես 1-ին հավելվածի 9-րդ փաստաթուղթ⁴⁴:

³⁹ Տե՛ս DBFP, v. VIII, Document № 20.2: Approval of reply to President Willson's note of Mar. 24 and of draft despatch to him concerning Armenia; approval of replt to memo. of the League of Nations; draft articles to be inserted in the Turkish peace Treaty, April 26, 1920, էջ 217:

⁴⁰ Հիշատակվող գրության ամբողջական տեքստի վերաբերյալ տե՛ս սույն հոդվածի № 3 ծանոթագրությունը:

⁴¹ Փաստաթղթի համառոտ վերլուծությունը կա սույն հոդվածի սկզբնամասում: Ամբողջական տեքստը տե՛ս DBFP, v. VIII, Document № 4, Appendix 2: Draft answer to American note, April 19, 1920. էջ 31-35:

⁴² Տե՛ս The National Archives, UK, Catalogue Refereance: CAB/24/104, էջ 428-433, Document: Answer to American Note on the Treaty of Peace with Turkey, Approved by the Sureme Council at the San Remo on 26th April 1920:

⁴³ Տե՛ս FRUS, 1920, v. III, Document: The Ambassador in Italy (Johnson) to the Secretary of State, San Remo, April 27, 1920, էջ 753-756:

⁴⁴ Տե՛ս **W. Wilson**, Arbitral Award, Appendix 1, Number 9, Document: Johnson to Colby, San Remo, 27 April 1920, էջ 132-134:

Ահավասիկ այդ տարբերակները.

Տարբերակ № 1	Տարբերակ № 2
<p>№ 7. Դաշնակիցները լիովին կիսում են Ամերիկայի շահագրգռությունը՝ հաստատել անկախ Հայաստան:</p>	<p>№ 7. Գերագույն խորհուրդը լիովին բաժանում է այն մտահոգությունը, որը դրսևորել է Ամերիկյան Հայաստանի անկախության վերաբերյալ:</p>
<p>Նրանց հաստատական ձգտումն է եղել Հայաստանին հատկացնել այն տարածքը, որը նա կարող է ողջամտորեն պահանջել իր ներկա կարիքների և ապագա ընդլայնման համար:</p>	<p>Դաշնակիցներն ունեն ամեն ցանկություն Հայաստանին հատկացնել այն տարածքը, որին նա կարող է ողջամտորեն ձգտել՝ ներկայիս և ապագայի կարիքների համար:</p>
<p>Հաստատապես, սա ողջ պայմանագրի ամենաոճվար խնդիրն էր, և այն խոչընդոտները, որոնք ծառայած են եղել դաշնակիցների առջև, երբեմն անհաղթահարելի են թվացել:</p>	<p>Ամբողջ պայմանագրի միջից և ոչ մի հարց չի եղել լուծման համար այդքան խրթին, և ոչ մի հարցում Գերագույն խորհուրդը չի բախվել այդքան վիատեցնող դժվարությունների:</p>
<p>Խնդիրը լիարժեքորեն և անկեղծորեն քննարկման է ենթարկված Միացյալ Նահանգներին հղված առանձին գրագրության մեջ⁴⁵:</p>	<p>Մեկ այլ գրություն Ամերիկյան կառավարությանը կներկայացնի հարցն ամբողջությամբ⁴⁶:</p>

Այս տարբերակից առաջնայինը պետք է համարել պետքարտուղարության հրատարակածը (№ 1), քանի որ այն բուն փաստաթուղթն է, իսկ Իրավարար վճռի փաթեթում ընդգրկվածը Հռոմում ԱՄՆ դեսպան Ջոնսոնի վերաշարադրանքն է [paraphrase] (№ 2):

Ապրիլի 26-ին քննարկված Հայաստանին վերաբերող երկրորդ փաստաթուղթը համաժողովի կողմից Վուդրո Վիլսոնին ուղարկվելիք ուղերձն է եղել: Այն պատրաստվել է լորդ Քերզոնի կողմից: Այս փաստաթուղթը ևս պահպանվել է երկու տարբերակով՝ բուն փաստաթուղթը⁴⁷ և նրա վերաշարադրանքը դեսպան Ջոնսոնի կողմից⁴⁸:

Փաստաթուղթը, փաստորեն, անդրադարձ է երկու հարցի՝ Հայաստանի կարգավիճակի և Հայաստանի սահմանների հարցերին: Կարգավիճակի առնչությամբ այն տեղեկացրել է, որ դեռևս Լոնդոնի համաժողովն էր դիմել

⁴⁵ Տե՛ս FRUS, 1920, v. III, *op. cit.*, էջ 755: Բնօրինակը պահվում է Միացյալ Նահանգների ազգային արխիվում (National Archives and Records Administration, Records of the Department of State Relating to Political Relations between Armenia and Other States, 1910-1929, Roll 2, 760J.6715/60-760J.90C/7):

⁴⁶ Տե՛ս **W. Wilson**, *Arbitral Award*, Appendix 1, Number 9, *op. cit.*, էջ 134:

⁴⁷ Տե՛ս The National Archives, UK, Catalogue Reference: CAB/24/104, Document: Armenia, Despatch to President Wilson, San Remo, April 26, 1920, էջ 412-418, FRUS, 1920, v. III, The Ambassador in Italy (Johnson) to the Secretary of State, San Remo, April 27, 1920, էջ 779-783:

⁴⁸ Տե՛ս **W. Wilson**, *Arbitral Award*, Appendix I, Number 10, Document: Johnson to Colby, San Remo, 27 April 1920, էջ 135-143:

Ազգերի լիզային՝ խնդրելով, որ վերջինս ստանձնի Հայաստանի մանդատը: Ազգերի լիզայի պատասխանից հետո, այն է՝ կազմակերպությունը չի կարող ստանձնել որևէ մանդատ, քանզի դա միայն պետությունների իրավասությունն է, Պերագույն խորհուրդն իր գրության մեջ համոզմունք է հայտնել, որ «միակ մեծ տերությունը, որը շնորհիվ [առկա] համակրանքի և նյութական պաշարների ի վիճակի է մարդկության անունից ստանձնելու»⁴⁹ Հայաստանի մանդատը, Միացյալ Նահանգներն է:

Հայաստանի սահմանների հարցով Սան Ռեմոյի համաժողովը, վերահաստատելով, որ Միացյալ Նահանգները միշտ էլ հանդես է եկել Մեծ Հայաստան (Larger Armenia) ստեղծելու առաջարկներով, այնուամենայնիվ, ելնելով ստեղծված իրավիճակից, հրաժարվել է Հայաստանին միջերկրածովյան ափեզերք տալու գաղափարից: Ըստ համաժողովի. «Մնացյալ հարցերը վերաբերում են նրան, թե դեռևս թուրքական իշխանության տակ գտնվող էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթների ո՞ր մասերն է հնարավոր պատշաճորեն և ապահով կերպով ավելացնել արդեն իսկ գոյություն ունեցող Երևանի հայկական պետությանը»⁵⁰:

Այսպիսով, Սան Ռեմոյի համաժողովը Միացյալ Նահանգներին է դիմել հստակորեն արանձնացված երկու հարցով.

«Ձեռք բերվեցին պայմանավորվածություններ հետևյալի վերաբերյալ.

1. *Դիմել նախագահ Վիլսոնին առ այն, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները ստանձնի Հայաստանի մանդատն այն սահմաններում, որը ձևակերպված է Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի նախօրինակի առաջին տպագրության հինգերորդ բաժնում*⁵¹:
2. *Անկախ այն բանից, թե ինչ կլինի Միացյալ Նահանգների կառավարության պատասխանը մանդատի հարցի վերաբերյալ, Միացյալ Նահանգների նախագահին խնդրել, որ իրավարարությամբ որոշի Հայաստանի սահմանները, ինչպես ձևակերպված է ներքո նախօրինակ հողվածի մեջ:*
3. *Հայաստանի մասին հողվածը պետք է ներառվի խաղաղության պայմանագրի հետևյալ բովանդակությամբ.*
Թուրքիան և Հայաստանը, ինչպես նաև մյուս պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Միացյալ Նահանգների նախագահի իրավարարությանը հղել Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի հարցը՝ էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներում և ընդունել նրա որոշումն անմիջապես, ինչպես նաև բոլոր այն պայմանները, որոնք նա տեղին կնկատի Հայաստանի անկախ պետությանը դեպի ծով ելք տալու համար:
Մինչև իրավարար վճիռը Թուրքիայի և Հայաստանի սահմանները պիտի մնան՝ ինչպես ներկայումս է:
Հայաստանի սահմանները հյուսիսում և արևելքում, այն է՝

⁴⁹ FRUS, 1920, v. III, *op. cit.*, p. 779.

⁵⁰ *Ibid.*, p. 780.

⁵¹ Այդ սահմանների նկարագրությունը տես DBFP, v. VII, Document №71, Appendix I: Report on Formation of a Future Armenian State, էջ 642-9:

Հայաստանի և Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև, պիտի որոշվեն Գերագույն խորհրդի կողմից Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը որոշելու հետ միաժամանակ, եթե սույն հարցի շուրջ ձախողվի ինքնակամ համաձայնությունը կովկասյան երեք պետությունների միջև»⁵²:

Փաստորեն, այս հայցադիմումը ապրիլի 25-ին բրիտանական պատվիրակության կողմից ներկայացված և համաժողովի կողմից ընդունված չորս կետերից առաջին երեքի ամրագրումն էր Վիլսոնին հասցեագրված գրության մեջ, որտեղ առաջին երկու կետերը գրեթե ամբողջությամբ, իսկ երրորդ կետը բացարձակապես ամբողջությամբ կրկնում է որոշումը: Նշյալ փաստաթղթի մեջ, բացի վերոհիշյալ հարցերից, շոշափվել է նաև Հայաստանին ռազմական և նյութական օգնություն ցուցաբերելու հարցը:

Սան Ռեմոյի համաժողովի վերջին օրը՝ ապրիլի 26-ին, քննարկված երրորդ փաստաթուղթը Գերագույն խորհրդի հերթական գրությունն էր Ազգերի լիգային⁵³: Այս ուղերձն արձագանք էր Ազգերի լիգայի 11 ապրիլի 1920 թ. գրության, որն իր հերթին գրվել էր ի պատասխան Գերագույն խորհրդի 12 մարտի 1920 թ. նամակի: Գերագույն խորհուրդը նախ հստակեցրել է, որ ակնկալիք չի ունեցել, թե Ազգերի լիգան կստանձնի Հայաստանի մանդատը, քանզի հասկանալի է, որ դա միայն պետությունների իրավասությունն է: Նպատակն է եղել պարզել Ազգերի լիգայի պատրաստակամության մակարդակը Հայաստանին օգնելու հարցում: Ըստ այդմ, Ազգերի լիգայի խորհրդի Հայաստանին օգնելու պատրաստակամության առումով Գերագույն խորհուրդն իրեն միանգամայն բավարարված է համարել: Միևնույն ժամանակ խնդրո առարկա գրությամբ Գերագույն խորհուրդը Ազգերի լիգային տեղյակ է պահել, որ նախորդ օրը սկզբունքային որոշումներ են կայացվել:

1. Դիմել Միացյալ Նահանգներին Հայաստանի մանդատը ստանձնելու խնդրանքով,
2. Դիմել ԱՄՆ նախագահին, որպեսզի վերջինս իրավարար վճռով որոշի հայ-թուրքական սահմանը,
3. Խաղաղության պայմանագիր ներառել Հայաստանին վերաբերող հոդվածները:

Գերագույն խորհուրդն Ազգերի լիգային ի գիտություն է ուղարկել նաև Վիլսոնին հասցեագրված գրության պատճենը⁵⁴:

1920 թ. ապրիլի 26-ին Սան Ռեմոյում քննարկված Հայաստանին վերաբերող վերջին հարցը Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի մեջ ընդգրկվելիք հինգ հոդվածների վերջնական տեքստի հաստատումն էր⁵⁵: Նշյալ հինգ հոդվածների և Սևրի պայմանագրի ներառված համապատասխան 88-93 հոդվածների համեմատությունը բացահայտում է

⁵² FRUS, 1920, v. III, *op. cit.*, p. 780 - 781.

⁵³ Stú The National Archives, UK, Catalogue Reference: CAB/24/104: Reply to the League of Nations, approved by the Supreme Council at San Remo on 26th April 1920, էջ 409-411:

⁵⁴ *Ibid.*, pp. 410-411.

⁵⁵ Stú The National Archives, UK, Catalogue Reference: CAB/24/104, Image Reference: 0089, Document: Treaty of Peace with Turkey, Section V, Armenia, Articles approved by the Supreme Council on 26th April 1920, էջ 419-420:

հետևյալը. № 1 և № 88 հոդվածները լրիվ նույնական են: № 2 և № 89 հոդվածների միջև կա զուտ խմբագրական տարբերություն, № 89-ի վերջում ավելացված են «վերոհիշյալ սահմանին» (*to the said frontier*) բառերը: №3 և № 90 հոդվածների միջև կա էական խմբագրական տարբերություն, սակայն բովանդակային մասն անփոփոխ է: Սան Ռեմոյում ընդունված տարբերակի № 4 հոդվածը բաժանված է երկու մասի, և Սևրի պայմանագրում այն հանդես է գալիս № 91 և № 93 հոդվածներով: Բացի որոշակի խմբագրական ձևակերպումներից՝ կա մեկ էական տարբերություն. Սան Ռեմոյի տարբերակում, երբ խոսքը Սահմանային հանձնաժողովի մասին է (Boundary Commission), նշվում է, որ նրա անդամներին պիտի նշանակեն «Գլխավոր դաշնակից ուժերը, [ինչպես նաև] մեկական անդամ Հայաստանը և Թուրքիան»⁵⁶ (members nominated by the principal Allied Powers, one by Armenia and one by Turkey): Սևրի տարբերակում պարզապես նշվում է, որ հանձնաժողովի «կազմը կորոշվի համապատասխանաբար»⁵⁷ (*will be determined subsequently*): Սան Ռեմոյի № 5 հոդվածը գրեթե նույնությամբ համապատասխանում է Սևրի պայմանագրի №92 հոդվածին:

Վերջում Սան Ռեմոյի համաժողովը որոշում է, որ վերոհիշյալ փաստաթղթերը Գերագույն խորհրդի անունից պաշտոնապես կհանձնվեն Հռոմում ԱՄՆ դեսպան Ռոբերտ Ջոնսոնին՝ նախագահ Վուդրո Վիլսոնին փոխանցելու համար⁵⁸:

Այսպիսով, ամփոփելով Սան Ռեմոյի համաժողովում Հայաստանի կարգավիճակի և սահմաններին վերաբերող հարցերի քննարկումները, կարող ենք անել հետևյալ եզրակացությունները.

- Համաժողովը վերահաստատեց Հայաստանի կարգավիճակը՝ որպես անկախ և ազատ երկիր, միևնույն ժամանակ հայցով դիմեց Միացյալ Նահանգներին՝ խնդրելով ստանձնել Հայաստանի խնամատարությունը (mandate):
- Հանձնաժողովը արմատական վերատեսության ենթարկեց հայթորքական սահմանի որոշման սկզբունքը: Հայաստան-Թուրքիա սահմանը որոշելու փոխարեն համաժողովը դիմեց ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին՝ հայցելով վերջինիս իրավարար վճիռը խնդրո առարկա սահմանի վերաբերյալ:
- Համաժողովը հաստատեց նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների պատկանելությունը Հայաստանի Հանրապետությանը՝ վերջնական սահմանագծումը (delimitation) վերապահելով ԱՄՆ նախագահ Վիլսոնի՝ կատարման համար պարտադիր իրավարար վճիռն:

⁵⁶ *Ibid.*, p. 420

⁵⁷ Major Peace Treaties of Modern History, 1648-1967, [ed. Fred Israel], v. III, New York, 1967, Treaty of Sevres, p. 2087.

⁵⁸ Տե՛ս DBFP, v. VIII, Document № 20.2: *op.cit.*, էջ 219, n. 10.

- Հայաստան-Վրաստան և Հայաստան-Ադրբեջան սահմանների հարցով համաժողովը վերահաստատեց Լոնդոնի համաժողովի որոշումները:
- Համաժողովը շարունակեց և զարգացրեց դիվանագիտական գրագրությունը Ազգերի լիգայի հետ՝ Հայաստանին քաղաքական, ռազմական և նյութական աջակցություն ապահովելու նպատակով:

ԱՐԱ ՓԱՊԻԱՆ – *Вопрос статуса и границ Республики Армения на конференции в Сан-Ремо.* – В статье рассматривается армянский аспект конференции в Сан-Ремо (18–26 апреля 1920 г.). Главной задачей указанной конференции было завершить подготовку мирного договора с побеждённой Османской империей (он был подписан в Севре 10 августа того же года). В ходе конференции неоднократно и активно поднимались вопросы статуса Армении и её границы с Турцией, а также с Грузией и Азербайджаном. В результате дискуссий окончательное разрешение этих вопросов было делегировано президенту США Вудро Вильсону: “А) запросить президента Вильсона о том, чтобы Соединённые Штаты приняли мандат на Армению; б) предложить Президенту, каков бы ни был ответ американского правительства по вопросу мандата, чтобы он арбитражным решением определил границу между Турцией и Арменией”. Роль и возможное участие Лиги Наций в политической судьбе РА были в числе основных тем конференции в Сан-Ремо.

ԱՐԱ ՓԱՊԻԱՆ – *The Status and the Border Issue of the Republic of Armenia at San Remo Conference.* – The article deals with the Armenian aspect of the San Remo Conference (18-26 April 1920). The main objective of the mentioned conference was to complete that of the First Conference of London (12 February – 10 April 1920) in preparing the treaty of peace with the broken Ottoman Empire, signed as the Treaty of Sevres on August 10, 1920. The issues of the status of Armenia and its boundaries with Turkey, as well as with Georgia and Azerbaijan, were brought up intensively and discussed vigorously during the conference. Accordingly, the Supreme Council decided to delegate the solution of these problems to US President Woodrow Wilson: “a) To communicate to President Wilson a request that the United States assume a mandate over Armenia; b) To invite the President, whatever be the reply of the American Government with regard to the mandate, to arbitrate the frontiers of Armenia.” The role and possible participation of the League of Nations in the political faith of the Republic of Armenia was one of the major topics of the San Remo Conference.